

Հ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԱԿՒՆԵԱՆ

ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ՅՈՒՆԵՍԿՈ

1904-1954

Սեպտեմբեր 11-ին այս տարի Վիեննայի մէջ կը տօնուի Հանդիսաւորապէս Յիսնամեայ Յորեկանը Հ. Ներսէս Վրդ. Ակիւնեանի:

Արժանաւոր վարձատրութիւն արգարեւ հայ բանասիրութեան այդ մեծ մշակին, որ ջանաց նոր հորիզոններ թեւակոխել: Իր եռանդը չի ճանչնար չափ ու սահման, իր տաղանդը եթէ երբեք ստեղծեց ցնցումներ աւանդական կարծիքներու հանդէպ, սակայն արթնցուց պայքար մը աւանդապահներու եւ յեղաշրջող քննադատութեան միջեւ, նոր լոյսերու հասնելու համար:

«Բազմալէզ»ի իմբրագրութիւնը, ձայնը ըլլալով միանգամայն Մխիթարեան քոյր Միաբանութեան, պարտք կը համարի չընորհաւորելու զինքը եւ այս հակիրճ տողերով մասնակցելու ազգին ընդհանուր ոգեւորութեան, անգամ մը եւս յարգանքի բաժինը բերելով մեր կողմէն իր անունին հանդէպ:

Յիսուն տարիներ ան հակած ճակատը հայ գրչագիրներու վրայ՝ տքնեցաւ, ամփոփեց, հաւաքեց, դասաւորեց եւ քննադատեց հին գրականութեան դարաշրջանները, դէմքերը, արտագրութիւնները:

Անխոնջ աշխատող Գեր. Հայրը, հին Մխիթարեաններու պէս զիտէր ժամանակին յարգը: Օգտագործեց հետեւաբար իր կեանքին բոլոր օրերը միակ նպատակի մը համար, վերաքննել հայ բանասիրութիւնը, անցընել դայն նոր քննութեան մը բովէն, ու նոր աշխարհ բերել ձեռագիրներու անկիւնները թաքուն դէմքեր, վկայութիւններ. եւ անոնց հիման վրայ կեր-

տել նոր տեսութիւններ: Կատարեց ճամբորդութիւններ եւրոպական կեդրոններ, Երուսաղէմ, Անթիլիաս, Ձմառ, եւ նոյն իսկ Հայաստան՝ նոր աղբիւրներու ի խնդիր: Չորս հազարէ աւելի ձեռագիրներ աչքէ անցուց, ուսումնասիրեց ձեռնհասութեամբ:

Իր տակաւին անտիպ մեծ դործը «Պատմութիւն հին հայ մատենագրութեան», պիտի տայ անշուշտ լիակատար համապատկերը հին շրջանի հայ մտքին թողած ժառանգութեան: Հոն այդ դործին մէջ հաւանաբար պիտի դնենք հաւաքուած եւ օգտագործուած իր ուղեւորութիւններուն եւ տքնաջան պրպտումներուն բովանդակ արդիւնքը:

Եւ այդ դործը պիտի ըլլայ իր փառապսակը, յետ իր բազմաթիւ երկասիրութիւններուն, որոնք արդէն մեծ ծաւալ մը կը կազմեն: Ազգային Մատենադարանի շարքին մէջ ունի երեսուն հատորներ, եւ անոնցմէ դուրս քսան հատոր եւս, որով իր Յորեկանի զլիսուն շուրջ այսօր յիսուն հատոր դործ՝ փառաւոր պսակ մը արդէն կը կազմեն:

Իր գրական դործունէութիւնը կը սկսի զլիսաւորապէս 1909-ին, բայց այդ թրւականէն շատ առաջ արդէն ան հետամուտ առաջը հաւաքելու իր ապագայ երկասիրութիւններուն, 1907-ին քահանայ ձեռնադրուելէն առաջ ալ նոյնիսկ արտագրած է, տալով պտուղը իր բանասիրական պրպտումներուն:

1909-ին խմբագրապետ է «Հանդէս Ամսօրեայ»ի: Ամբողջ իր կեանքովը դրեթէ

մնաց փարած Վիեննական Մխիթարեան Միաբանութեան հայագիտական թերթին: Կարճ ժամանակ մը միայն, 1912-1920, անկարելի եղաւ իրեն հետեւիլ անոր՝ ուրիշ դործերու պատճառով: Բայց 1920-էն վերսկսելով անոր խմբագրութիւնը, անընդհատ նիւթ հայթայթած է անոր, եւ իր բեղուն մտքին արտագրութիւնները ընծայած է ազգին:

Երկար պիտի ըլլար ցանկը, եթէ ուզէինք թուարկել իր բոլոր դործերը:

Բայց անկարելի է չիշխել դէթ կարեւորագոյնները անոնցմէ:

Ահաւասիկ անոնք հրատարակութեան թուականին կարգով. Տիմոթէոս կուգ հայ մատենագրութեան մէջ (1909), Ջափարիա եպիսկոպոս Գնունեաց եւ իր տաղերը (1910), Կիւրիոն Կաթ. Վրաց (1910), որ է պատմութիւն հայ-վրական յարաբերութիւններու է. դարուն մէջ, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղքատաբայ (1920), որ պատմական ամփոփում մըն է Աղթամարայ կաթողիկոսութեան սկիզբէն մինչեւ վերջը, Հինգ պանդուխտ տաղասացներ (1921), Մատենագրական հետազոտութիւններ 5 հատորներու մէջ (Ա. հտ. 1922-ին, Բ. հտ. 1924-ին, Գ. հտ. 1930-ին, Դ. հտ. 1938-ին, Ե. հտ. 1953-ին, ուր կը քննուին զլիսաւորապէս հայ գրողները եւ կարեւոր ձեռագիրներ, Թուրք Մակարայ Բ. Երուսաղէմի հայրապետին (1930), ուր կ'ուսումնասիրուի Մակարի թուղթը գրուած առ Վրթանէս հայոց կաթողիկոս, հանդերձ քննութեամբ բնագրին: Նոյն Վարդապետ եւ իր Պատմութիւն հայոց պատերազմին 3 հատորներու մէջ

(Ա. հտ. 1932, Բ. հտ. 1936-ին. Գ. հտ. տորը լոյս տեսաւ 1952-ին), Դասական հայերէնը եւ Վիեննական Մխիթարեան Դպրոցը (1932), Երեմիա Քէօմիւրնեանի (Չէլէպի) կեանքն ու գրական գործունէութիւնը (1933), Մովսէս Գ. Տաթեւացի Կաթողիկոս (1935), քննութիւն մը իր շրջանի եկեղեցական պատմութեան, Տեսիլ Ս. Սահակայ (1948), Մաշտոց վարդապետ (1949), Քրիստոնէութեան մուտքը Հայաստան եւ Վրաստան (1949), Կարմիրն Վարդան եւ Աւարայրի ճակատամարտը (1951), Բաղէշի դպրոցը (1952), Կորիւն (1950) եւ...:

Ներկայ թուարկումը ցոյց կու տայ արդէն թէ Հ. Ն. Ակիւնեան ինչպիսի՜ զանազանեալ նիւթեր մշակած է. լեզուական, պատմական, մատենագրական, հայրախօսական հարցեր դրաղեցուցած են զինքը, եւ այդ բոլոր նիւթերու մէջ ջանացած է բերել նորութիւններ:

«Բազմալէզ»ի իմբրագրութիւնը եւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը այս առթիւ կը հիւսէ Գեր. Յորեկանին՝ ջերմագին մաղթանք մը դեռ երկար տարիներու բեղնաւոր աշխատանքի, որպէսզի Հայ Բանասիրութիւնը օգտուի իր աշխոյժ եւ զիւսաւոր տեսութիւններէն, եւ իր օրինակը ըլլայ խթան մը բոլոր այն բանասէրներուն, որոնք նուիրուած են հին հայ մատենագրութեան քննական մարդին, որ հակառակ կատարուած քննական աշխատանքներուն, տակաւին կը կարօտի լոյսի եւ անվիճելի եզրակացութիւններու:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

